

Կ-164-28.11.2012-ՏՀ-010/2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

«ԱԿՑԻԶԱՅԻՆ ՀԱՐԿԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»

Հոդված 1. «Ակցիզային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության 2000 թվականի հուլիսի 7-ի ՀՕ-79 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 3-րդ հոդվածը՝

1) 1-ին մասում «(բացառությամբ բնական գազի)» բառերից հետո լրացնել «, քսայուղերը, ինչպես նաև սույն օրենքով սահմանված թեթև մարդատար ավտոմեքենաները» բառերը,

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 6-րդ և 7-րդ մասերով.

«6. Առանց իրավաբանական անձ ձևավորելու համատեղ գործունեություն իրականացվելու դեպքերում ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքների օտարման մասով ակցիզային հարկ վճարող է համարվում հարկերը հաշվարկելու և վճարելու պարտավորություն ստանձնած անձը:

7. Օրենքով սահմանված դեպքերում և կարգով ակցիզային հարկի հաշվարկման և վճարման պարտավորությունը կարող է դրվել այլ անձանց վրա կամ սահմանվել համապարտ պարտավորություն՝ հարկային պարտավորությունների կատարման մասով:»:

Հոդված 2. Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասում և 5-րդ հոդվածի 2-րդ մասում «(բացառությամբ խաղողի գինեգործության ստացված կոնյակի սպիրտի)» բառերը փոխարինել «(բացառությամբ կոնյակի սպիրտի)» բառերով:

Հոդված 3. Օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ «գ» կետով.

«գ) առանց իրավաբանական անձ ձևավորելու համատեղ գործունեություն իրականացնելու համար որպես ներդրում ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքների մատակարարումը, եթե համատեղ գործունեության մասով հարկերը հաշվարկելու և վճարելու պարտավորությունները ստանձնելու մասին հայտարարություն հարկային մարմին չի ներկայացվել:»:

Հոդված 4. Օրենքի 5-րդ հոդվածի՝

1) 1-ին մասի աղյուսակում՝

ա. ԱՏԳ ԱԱ 2206 ծածկագրին վերաբերող տողը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2206 (բացառությամբ 2206 00 390, 2206 00 590, 2206 00 890)	խմորման ենթարկված այլ ըմպելիքներ (խնձորի սիդր, պերու (տանձի սիդր), մեղրաըմպելիք), բացառությամբ պտղային, հատապտղային գինիների և գինեգործության	տեղական արտադրության դեպքում՝ բացառված գին (առանց ավելացված արժեքի հարկի և ակցիզային հարկի) կամ 1 լիտր ներմուծման դեպքում՝ մաքսային արժեք կամ 1 լիտր	25 տոկոս, բայց ոչ պակաս, քան 1 լիտրի համար 270 դրամ»,
--	---	---	--

բ. ԱՏԳ ԱԱ 2206 ծածկագրին վերաբերող տողից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր տող.

«2206 00 390, 2206 00 590, 2206 00 890	պտղային, հատապտղային, մրգային և այլ գինիներ	տեղական արտադրության դեպքում՝ բացթողնման գին (առանց ավելացված արժեքի հարկի և ակցիզային հարկի) կամ 1 լիտր ներմուծման դեպքում՝ մաքսային արժեք կամ 1 լիտր	10 տոկոս, բայց ոչ պակաս, քան 1 լիտրի համար 100 դրամ»,
--	---	---	---

գ. ԱՏԳ ԱԱ 2208 ծածկագրին վերաբերող տողը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2208 (բացառությամբ 2208 20, 2208 30, 2208 40)	սպիրտային խմիչքներ	տեղական արտադրության դեպքում՝ բացթողնման գին (առանց ավելացված արժեքի հարկի և ակցիզային հարկի) կամ 1 լիտր ներմուծման դեպքում՝ մաքսային արժեք կամ 1 լիտր	50 տոկոս, բայց ոչ պակաս, քան 1 լիտրի համար 500 դրամ»,
--	--------------------	---	---

դ. ԱՏԳ ԱԱ 2208 ծածկագրին վերաբերող տողից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր տող.

«2208 20 2208 30 2208 40	սպիրտային թրմեր՝ ստացված խաղողի գինու թորման արդյունքում կամ խաղողի ձգմամբ վիսկի ռոմ և այլ սպիրտային թրմեր՝ ստացված խմորված մթերքների թորման արդյունքում շաքարաեղեգից	տեղական արտադրության դեպքում՝ բացթողնման գին (առանց ավելացված արժեքի հարկի և ակցիզային հարկի) կամ 1 լիտր, 100-տոկոսանոց սպիրտի վերահաշվարկով ներմուծման դեպքում՝ մաքսային արժեք կամ 1 լիտր, 100-տոկոսանոց սպիրտի վերահաշվարկով	50 տոկոս, բայց ոչ պակաս, քան 1 լիտրի համար՝ ա. 1-ից մինչև 3 տարի ներառյալ հնացման ժամկետ ունեցող խմիչքի համար՝ 3000 ՀՀ դրամ, բ. 4-ից մինչև 5 տարի ներառյալ հնացման ժամկետ ունեցող խմիչքի համար՝ 3500 ՀՀ դրամ, գ. 6-ից մինչև 10 տարի ներառյալ հնացման ժամկետ ունեցող խմիչքի համար՝ 6000 ՀՀ դրամ, դ. 11-ից մինչև 15 տարի ներառյալ հնացման ժամկետ ունեցող խմիչքի համար՝ 8500 ՀՀ դրամ, ե. 16-ից մինչև 19 տարի ներառյալ հնացման ժամկետ ունեցող խմիչքի համար՝ 14000 ՀՀ
--	---	---	---

			դրամ, զ. 20 և ավելի տարի հնացման ժամկետ ունեցող խմիչքի համար՝ 22000 ՀՀ դրամ»,
--	--	--	--

ե. ԱՏԳ ԱԱ 271011 ծածկագիրը փոխարինել 271012 ծածկագրով,

զ. ԱՏԳ ԱԱ 271019810 ծածկագրին դասվող տողը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2710 19 710- 2710 19 980	Քսայուղեր	տեղական արտադրության դեպքում՝ բացթողնման գին (առանց ավելացված արժեքի հարկի և ակցիզային հարկի) կամ 1 կգ ներմուծման դեպքում՝ մաքսային արժեք կամ 1 կգ	10 տոկոս, բայց ոչ պակաս, քան 1 կգ-ի համար 400 դրամ»,
------------------------------	-----------	---	--

2) 5-րդ մասը՝

ա. «2208 ապրանքախմբի ծածկագրին դասվող ապրանքների» բառերից հետո լրացնել «(բացառությամբ 40 տոկոս և բարձր սպիրտայնությամբ չչալցված կոնյակի և չչալցված կոնյակի սպիրտի)» բառերը,
բ. լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերությամբ.

«ԱՏԳ ԱԱ 220820, 220830 և 220840 ապրանքախմբի ծածկագրերին դասվող ապրանքներ ներմուծող կամ արտադրող (ներառյալ՝ չչալցնող կամ այլ կերպ տարայավորող) անձինք պարտավոր են տվյալ ապրանքի շնչի կամ այլ տարայի վրա Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով մակնշել ապրանքի հնեցման աստիճանը՝ ըստ տարիների: ԱՏԳ ԱԱ 220820, 220830 և 220840 ապրանքախմբի ծածկագրերին դասվող ապրանքների հնեցման աստիճանի վերաբերյալ շնչի կամ այլ տարայի վրա մակնշման բացակայության դեպքում ակցիզային հարկը հաշվարկվում է սույն հոդվածի 1-ին մասի աղյուսակի՝ ԱՏԳ ԱԱ 2208 20, 2208 30, 2208 40 ծածկագրերին վերաբերող տողի «զ» ենթակետով սահմանված դրույքաչափից ոչ պակաս չափով»:

Հոդված 5. Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ «ե» կետով.

«ե) 40 տոկոս և բարձր սպիրտայնությամբ չչալցված կոնյակի օտարումը կոնյակ արտադրող այլ անձանց»:

Հոդված 6. Օրենքի 7-րդ հոդվածի 10-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերությամբ.

«Օտարերկրյա պայմանադիր կողմի հետ կնքված՝ նախկինում մաքսային մարմին ներկայացված պայմանագրի շրջանակներում ներմուծումներ իրականացվելու դեպքերում պայմանագրի փոխարեն մաքսային մարմին կարող է ներկայացվել ՀՀ ներմուծվելիք ապրանքների տեսականու և քանակությունների, տարայի տարողության, իսկ սպիրտային խմիչքների դեպքում՝ նաև սպիրտայնության վերաբերյալ տվյալներ պարունակող այլ փաստաթուղթ»:

Հոդված 7. Օրենքի 7.1-րդ և 7.2-րդ հոդվածները, 10-րդ հոդվածի 4-րդ մասը ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 8. Օրենքի 8-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 9-րդ և 10-րդ մասերով.

«9. Համատեղ գործունեության պայմանագրով համատեղ գործունեության գործերի վարումը օրենքով սահմանված կարգով հարկերը հաշվարկելու և վճարելու պարտավորություն ստանձնած մեկ մասնակցի կողմից վարվելու դեպքում համատեղ գործունեության շրջանակներում իրականացված գործարքների մասով ակցիզային հարկի առանձնացմամբ հարկային հաշիվները դուրս են գրվում հարկերը հաշվարկելու և վճարելու պարտավորություն ստանձնած անձի կողմից:

Համատեղ գործունեության պայմանագրով մեկից ավելի անձի կողմից գործերի վարում նախատեսված լինելու դեպքում համատեղ գործունեության մասով իրականացված գործարքների մասով առանձին մասնակցի կողմից ակցիզային հարկի առանձնացմամբ հարկային հաշիվներ կարող են դուրս գրվել հարկերը հաշվարկելու և վճարելու պարտավորությունը ստանձնած անձի անունով՝ համատեղ գործունեության բոլոր մասնակիցների համապատասխան գրավոր համաձայնության առկայության դեպքում:

10) առանց իրավաբանական անձ ձևավորելու համատեղ գործունեության իրականացման համար տրամադրվող ներդրումներին վերաբերող՝ ձեռք բերված հումքի դիմաց վճարված ակցիզային հարկի գումարները ենթակա չեն հաշվանցման կամ վերադարձման, բացառությամբ՝ սույն օրենքի 4-րդ հոդվածի 1-ին կետի «գ» ենթակետով սահմանված դեպքի: Սույն կետին համապատասխան հաշվանցման ոչ ենթակա ակցիզային հարկի այն գումարները, որոնք նախկինում հաշվանցվել են, վերաձևակերպվում և նվազեցում են հաշվանցվող գումարներից այն հաշվետու ժամանակաշրջանում, որում կատարվել է ներդրումը:»:

Հոդված 9. Օրենքի 9-րդ հոդվածում լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 3-րդ մաս.

«3. Արդյունաբերական ընկերությունների կողմից ձեռք բերված ԱՏԳ ԱԱ 2710 19 710-2710 19 980 ապրանքախմբի ծածկագրերին դասվող ապրանքների (բացառությամբ ԱՏԳ ԱԱ 2710 19 810 ապրանքախմբի ծածկագրին դասվող շարժիչային յուղերի) մասով վճարված ակցիզային հարկի գումարը վերադարձվում է Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված կարգով:»:

Հոդված 10. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2013 թվականի հունվարի 1-ից, բացառությամբ սույն օրենքի 4-րդ հոդվածի 1-ին կետի «գ» և «դ» ենթակետերի ու 2-րդ կետի «բ» ենթակետի:

Սույն օրենքի 4-րդ հոդվածի 1-ին կետի «գ» և «դ» ենթակետերն ու 2-րդ կետի «բ» ենթակետը ուժի մեջ են մտնում 2013 թվականի ապրիլի 1-ից:

Մինչև 2012 թվականի դեկտեմբերի 31-ը (ներառյալ) ձեռք բերված և բանկային փոխանցմամբ մատակարարին վճարում չկատարելու պատճառով ակցիզային հարկի հաշվանցվող գումարներից նվազեցված՝ 40 տոկոս և բարձր սպիրտայնությամբ չշշալցված կոնյակին վերաբերող ակցիզային հարկի գումարը 2013 թվականի հունվարի 1-ից հետո ենթակա է հաշվանցման (հաշվանցվող գումարներին ավելացման)՝ օրենքով սահմանված դեպքերում և կարգով:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«Ակցիզային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ ներկայացված առաջարկությունների, դրանց ընդունման կամ չընդունման վերաբերյալ

Առարկության, առաջարկության հեղինակը	Առարկության, առաջարկության բովանդակությունը	Եզրակացություն	Կատարված փոփոխությունները
ՀՀ Ազգային ժողովի տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Վ. Այվազյան ՀՀ Աժ պատգամավոր Ա. Պետրոսյան	Առաջարկվում է նախագծով կարգավորել մինչև 2012 թվականի դեկտեմբերի 31-ը ձեռք բերված 40 տոկոս և բարձր սպիրտայնությամբ չշաղկված կոնյակի մասով հաշվանցումից հետաձգված ակցիզային հարկը 2013 թվականի հունվարի 1-ից հետո հաշվանցելու (մատակարարին վճարում կատարելու դեպքում) հետ կապված հարցերը:	Ընդունվել է:	Նախագծի 10-րդ հոդվածում լրացվել է հետևյալ բովանդակությամբ նոր պարբերություն. «Մինչև 2012 թվականի դեկտեմբերի 31-ը (ներառյալ) ձեռք բերված և բանկային փոխանցմամբ մատակարարին վճարում չկատարելու պատճառով ակցիզային հարկի հաշվանցվող գումարներից նվազեցված՝ 40 տոկոս և բարձր սպիրտայնությամբ չշաղկված կոնյակին վերաբերող ակցիզային հարկի գումարը 2013 թվականի հունվարի 1-ից հետո ենթակա է հաշվանցման (հաշվանցվող գումարներին ավելացման)՝ օրենքով սահմանված դեպքերում և կարգով:»:
ՀՀ Աժ պատգամավոր Ա. Պետրոսյան	Առաջարկվում է նախագծով նախատեսել, որ կոնյակի արտադրանքի մասով նվազագույն ակցիզային հարկի վերանայմանը վերաբերող դրույթներն ուժի մեջ են մտնում 2013 թվականի ապրիլի 1-ից:	Ընդունվել է:	Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն: